

**ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԱՇԳԱՅԻՆ ՓՈՋՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՅԹՆԵՐԻ
ԿՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, այսուհետ՝՝ Պայմանագրովող
կողմեր,

համարելով, որ իրենց միջեւ բարեկամության, բարիդրացիության եւ
համագործակցության հարաբերությունների զարգացումը եւ ամրապնդումը
համապատասխանում է իրենց ժողովուրդների արմատական շահերին եւ ծառայում է
խաղաղության եւ անվտանգության գործին,

հաստատելով իրենց կողմանակցությունը ժողովորդավարությանը, ազատությանը եւ
արդարությանը,

հաստատելով նաեւ իրենց կողմանակցությունը մարդու իրավունքների բնագավառում
միջազգային չափանիշների պահպանմանը, որոնք ամրագրված են, մասնավորապես, մարդու
իրավունքների համընդիանուր հոչակագրում, քաղաքացիական ու քաղաքական
իրավունքների մասին միջազգային Դաշնագրում, տնտեսական, սոցիալական եւ
մշակութային իրավունքների մասին միջազգային Դաշնագրում, ազգային կամ եթևիկ,
կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների
մասին հոչակագրում, ռասայական խորականության բոլոր ձեւերի դեմ պայքարի մասին
միջազգային Կոնվենցիայում, ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա
համար պատճելու մասին Կոնվենցիայում, երեխայի իրավունքների մասին
Կոնվենցիայում եւ մարդու իրավունքների մասին այլ հիմնարար փաստաթղթերում,

հաշվի առնելով իրենց պարտավորությունները, որոնք բխում են Եվրոպայում
անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության Յելսինսկիի Եզրափակիչ
ակտից, Մադրիդի, Վիեննայի եւ Յելսինսկիի ամփոփիչ փաստաթղթերից, ԵՎՀԽ մարդկային
չափի Կոպենհագենի եւ Մոսկվայի խորհրդակցությունների փաստաթղթերից, մշակութային
ժառանգության մասին Կրակովի գիտաժողովի, ինչպես նաեւ նոր Եվրոպայի համար
Փարիզյան խարտիայի փաստաթղթերից,

Ելելով Նրանից, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց
իրավունքները հանդիսանում են մարդու հանրաճանաչ իրավունքների անբաժանելի մասը,

Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր Պայմանագրովող կողմի տարածքում
բնակվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք,

ըսդունելով, որ հիշատակված փոքրամասնությունները հանդիսանում են
հասարակության անբաժանելի մասը, որտեղ Նրանք ապրել ու ապրում են եւ
հարստացնում են այն իրենց աշխատանքով, ինքնատիպությամբ եւ մշակույթով,

համարելով, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց
իրավունքների խրախուսումը եւ պաշտպանությունը նպաստում է այն պետությունների
քաղաքական եւ սոցիալական կայունությանը, որտեղ Նրանք բնակվում են,

ինչպես նաեւ անհրաժեշտ համարելով պատշաճ միջոցների ձեռնարկումը ազգային
փոքրամասնությունների իրավունքների պահպանական համար եւ այդ նպատակներով
համագործակցության համապատասխան մեխանիզմների ստեղծումը, այդ թվում՝ երկկողմ
համաձայնագրերի շրջանակներում.

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՐԴԱՎԾ 1

Սույն Կոնվենցիայի նպատակների համար, ազգային փոքրամասնություններին
պատկանող անձինք ասելով, հասկացվում են անձինք, որոնք մշտապես բնակվում են մի
Պայմանագրովող կողմի տարածքում, ունեն Նրա քաղաքացիությունը, որոնք, ըստ իրենց
եթևիկ ծագման, լեզվի, մշակույթի, կրոնի կամ ավանդույթների, տարրերով են
տվյալ Պայմանագրովող կողմի հիմնական բնակչությունից:

ՀՈԴՎԱԾ 2

Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ պատկանելությունը ազգային փոքրամասնությանը անհատական ընտրության հարց է Եւ երաշխավորում են, որ նման ընտրությունը չի հանգեցնի նշված անձի համար որեւէ ոչ բարենպաստ հետեւանքների:

ՀՈԴՎԱԾ 3

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքներն ու ազտությունները՝ մարդու իրավունքների բնագավառում հանրաճանաչ միջազգային չափանիշներին եւ իր օրենսդրությանը համապատասխան:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը միջոցներ կձեռնարկի, որպեսզի թույլ չտա իր տարածքում ազգային փոքրամասնության պատկանելության բնութագրով քաղաքացիների որեւէ խտրականություն:

3. Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը ենթադրում է այդ անձանց կողմից իրենց պարտականությունների կատարումը այն պետության հանդեպ, որի տարածքում նրանք բնակվում են:

ՀՈԴՎԱԾ 4

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը, անհատապես կամ իր խմբի անդամների հետ համատեղ, անխափան կերպով արտահայտել, պահպանել եւ զարգացնել իրենց էթնիկ, լեզվական, մշակութային կամ կրոնական ինքնատիպությունը:

2. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց քաղաքականության մեջ հաշվի առնել ազգային փոքրամասնությունների օրինական շահերը եւ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ նրանց էթնիկ, լեզվական, մշակութային կամ կրոնական ինքնատիպության պահպանման եւ զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Նման միջոցները կծառայեն ամբողջ հասարակության շահերին եւ չպետք է ուժանահարեն Պայմանավորվող կողմերի մյուս քաղաքացիների իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 5

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ապահովել հասարակական եւ պետական կյանքին մասնակցելու իրավունք, հատկապես տարածաշրջանային մակարդակով նրանց շահերի պաշտպանությանը վերաբերող հարցերի լուծման դեպքում:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը ազգային օրենսդրությանը համապատասխան ստեղծելու լուսավորչական, մշակութային եւ կրոնական բնույթի տարբեր կազմակերպություններ (ասոցիացիաներ, հայրենակցական միություններ եւ այլն)` էթնիկ, լեզվական, մշակութային եւ կրոնական ինքնատիպության պահպանման եւ զարգացման նպատակով:

Նշված կազմակերպությունները կունենան նույնական իրավունքներ, որոնք տրամադրվում են նման կազմակերպություններին, մասնավորապես, ինչ վերաբերում է հասարակական շենքերից, ռադիոհաղորդումներից, հեռուստատեսությունից, մամուլից, զանգվածային լրատվության այլ միջոցներից օգտվելուն:

ՀՈԴՎԱԾ 6

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային

փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ բնակության պետության տարածքում անխափան պահպանելու շփումներ միմյանց միջեւ, ինչպես նաեւ այն պետությունների քաղաքացիների եւ կազմակերպությունների հետ կապեր պահպանելու իրավունքը, որոնց հետ նրանք ունեն ընդհանուր եթնիկ ծագում, մշակույթ, լեզու կամ կրոնական համոգմունքներ: Նման կապերը եւ շփումները չպետք է հակասեն Պայմանավորվող կողմերի ազգային օրենսդրություններին:

2. Պայմանավորվող կողմերը իրենց տարածքում կիրախուսեն մյուս Պայմանավորվող կողմերի մշակութային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը:

ՀՈԴՎԱԾ 7

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ օգտագործելու իրենց անունները եւ ազգանունները, այդ թվում պաշտոնական փաստաթղթերում, ինչպես դա ընդունված է իրենց մայրենի լեզվով, ինչպես նաեւ անխափան կերպով օգտագործելու մայրենի լեզուն թե գրավոր, թե բանավոր խոսքում, ինարավորություն ունենալ օգտվելու այդ լեզվով տեղեկություններից, տարածելու եւ փոխանակելու նման տեղեկություններ, ներառյալ մայրենի լեզվով, զանգվածային լրատվության միջոցներ ստեղծելու իրավունքը:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, ազգային օրենսդրությանը համապատասխան, կատեղծի այնտեղ, որտեղ հնարավոր է եւ անհրաժեշտ, պաշտոնական իշխանությունների հետ շփումներում ազգային փոքրամասնությունների լեզվի օգտագործման համար պայմաններ:

ՀՈԴՎԱԾ 8

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունք անհատապես կամ իր խմբի անդամների հետ համատեղ դավանել իր կրոնը եւ իր դավանանքին համապատասխան կատարել կրոնական ծիսակատարություններ, պահել պաշտամունքային շինություններ, ձեռք բերել եւ օգտագործել պաշտամունքի համար անհրաժեշտ առարկաներ, ինչպես նաեւ մայրենի լեզվով վարել լուսավորչական կրոնական գործունեություն: Նման գործունեությունը չպետք է հակասի ազգային օրենսդրությանը:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում հիշատակված լուսավորչական, մշակութային եւ կրոնական բնույթի կազմակերպությունները կարող են ֆինանսավորվել կամավոր դրամական ներդրումների հաշվին, ինչպես նաեւ օգնություն ստանալ իրենց գունվելու վայրի պետությունից, նրա օրենսդրությանը համապատասխան: Նրանք նաեւ օգնություն կարող են ստանալ մյուս Պայմանավորվող կողմերի պետական եւ հասարակական կազմակերպություններից՝ նրանց գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ հաստատված պահանջների պահպանմամբ:

ՀՈԴՎԱԾ 10

Ազգային փոքրամասնությունների եթնիկ, լեզվական, մշակութային եւ կրոնական ինքնատիպության պահպանմանը աջակցելու նպատակով՝ Պայմանավորվող կողմերը, մասնավորապես.

ա) ընդունելով պետական լեզվի ուսումնասիրման անհրաժեշտությունը, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, առկա պահանջմունքների հաշվառմամբ կստեղծեն համապատասխան պայմաններ, ազգային փոքրամասնությունների կողմից մայրենի լեզվի ուսումնասիրման եւ մայրենի լեզվով կրթություն ստանալու համար, ներառյալ տարբեր մակարդակի կրթական

հաստատությունների եւ դրանց ստորաբաժանումների բացումը եւ պահպանումը, որոնք ֆինանսավորվում են տարբեր, այդ թվում սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված աղբյուրներից,

թ) կնպաստեն Պայմանավորվող կողմերի կրթության հարցերով գրադարձ պետական մարմինների միջեւ համագործակցությանը, կրթական հաստատությունների եւ դրանց ստորաբաժանումների, որտեղ դասավանդումը տարբեր է ազգային փոքրամասնությունների լեզուներով, այդ լեզուներով ծրագրերով, ուսումնական ձեռնարկներով եւ ուսումնական գրականությամբ ապահովման համար, օժանդակել այդ կրթական հաստատություններում եւ ստորաբաժանումներում աշխատանքի համար մասնագետների պատրաստմանը,

զ) միջոցներ կծռնարկեն ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանության եւ ուսումնասիրման համար, այդ թվում կապահովեն նրանց պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանությունը,

դ) ուսումնական հաստատություններում եւ լուսավորչական կազմակերպություններում պետության պատմության եւ մշակույթի ուսումնասիրման դեպքում հաշվի կառնեն ազգային փոքրամասնությունների պատմությունը եւ մշակույթը,

ե) կնպաստեն ազգային արհեստների պահպանությանը եւ զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 11

1. Պայմանավորվող կողմերը կնպաստեն երկկողմ, տարածաշրջանային եւ համընդհանուր մակարդակներով ազգային փոքրամասնությունների իրավունքի կողիքի կացման, այդ նպատակներով կնպաստեն Միավորված ազգերի կազմակերպության եւ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության շրջանակներում դրան ուղղված ջանքերը:

2. Պայմանավորվող կողմերը կօգտագործեն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային կազմակերպությունների իրավաստեղծ գործունեության փորձը:

ՀՈԴՎԱԾ 12

1. Սույն Կոնվենցիայից բխող Պայմանավորվող կողմերի ոչ մի պարտավորություն չի կարող մեկնաբանվել որպես միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին եւ նորմերին հակասող որեւէ գործունեության կամ գործողության համար իմմք, ներառյալ պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ քաղաքական անկախության հարգման սկզբունքները:

2. Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքների իրականացման դեպքում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կպահպանեն ընակության վայրի պետության օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքները եւ ազատությունները:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Կոնվենցիայի կատարման նկատմամբ հսկողությունը դրվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրության 33-րդ հոդվածին համապատասխան հիմնադրված մարդու իրավունքների Հանձնաժողովի վեհ:

ՀՈԴՎԱԾ 14

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Պայմանավորվող կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

2. Մյուս Պայմանավորվող կողմերի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում

Նրանց կողմից սույն հոդվածի առաջին մասում նշված ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

3. Սույն Կոնվենցիայի ավանդապահ պետությունն է Բելառուսի Հանրապետությունը:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Կոնվենցիային դրա ուժի մեջ մտնելուց հետո կարող են միանալ Կոնվենցիայի նպատակները եւ սկզբունքները կիսող մյուս պետությունները՝ նրանց կողմից սույն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի առաջին մասում նշված ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը ավանդապահին հանձնելու միջոցով։ Ավանդապահի կողմից նշված ծանուցումը ստանալու օրը հանդիսանում է այդ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը։

ՀՈԴՎԱԾ 16

Պայմանավորվող կողմերից ցանկացածը կարող է հայտարարել սույն Կոնվենցիայից դուրս գալու մասին՝ դուրս գալու օրվանից առևկազն վեց ամիս առաջ ավանդապահին գրավոր ծանուցելու միջոցով։

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի հոկտեմբերի 21-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն։ Բնօրինակը պահպում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը։

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 10-ից։